ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 16-18-ը Շվեյցարիայի Համադաշնություն / Ժնև / կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2025թ. հունիսի 16-18-ը

3.Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ-ի ԵՏՀ)

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (ԵՎԿ) 73-րդ լիագումար նիստին: Հանդիսանում եմ ԵՎԿ-ի Բյուրոյի քինգմեյքեր՝ անձ, ով մեծ ազդեցություն ունի Բյուրոյի անդամներ ընտրելու իրավասության հարցում:

5.Քննարկված թեմաները՝

Վիճակագրական գրասենյակների աշխատանքի ռազմավարական ուղղությունները, Միգրացիայի և մարդկային շարժունակության վիճակագրությունը, Տվյալների սխալ օգտագործման և ապատեղեկատվության դեմ պայքարը, Հետազոտությունների անցկացման փոփոխությունները և նորարարությունները, Միջազգային վիճակագրական աշխատանքների համակարգումը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի տարածաշրջանում, Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման բարձր մակարդակի խմբի աշխատանքը, Կոնֆերանսի հովանու ներքո պատրաստված զեկույցներ, ուղեցույցներ և առաջարկություններ (Մարդահամարի և կացարանների հաշվառման 2030թ. փուլի առաջարկություններ, Ընդհանուր վիճակագրական բիզնես գործընթացի մոդելի արդիականացում), ՄԱԿ-ի ԵՏՀ-ի վիճակագրության ենթածրագրի աշխատանքային ծրագիրը, Հաշվետվության հաստատումը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հունիսի 16-ի լիագումար նիստին իմ՝ որպես քինգմեյքերի, ելույթը նվիրված էր Բյուրոյի նոր կազմի մասին իմ առաջարկներին, դրանց ձևավորան իրավական հիմքերին և ՄԱԿ-ի ԵՏՀ-ի տարածաշրջանի անդամ 56 երկրների (ներառյալ Հյուսիսային Ամերիկան, Եվրոպան, Կովկասը և Կենտրոնական Ասիան) վիճակագրական գրասենյակների ղեկավարների հետ քննարկումներին:

Հունիսի 17-ի լիագումար նիստին իմ ելույթները նվիրված էին 2030թ. մարդահամարների հանձնարարականներին և տվյալների ու սուտ տեղեկությունների ոչ իրավաչափ օգտագործման դեմ պայքարին:

Լիագումար նիստին կատարեցի կոնֆերանսի բյուրոյի անդամների ընտրության հետ կապված քինգմեյքերի պարտականությունները, ինչը նախատեսված էր օրակարգի 10-րդ կետով: Դրանով պայմանավորված՝ ս.թ. մայիսի 20-ից սկսած ՄԱԿ-ի ԵՏՀ-ի անդամ բոլոր երկրների վիճակագրական գրասենյակների ղեկավարներին գրություններով ներկայացրել եմ բյուրոյի նոր կազմի վերաբերյալ իմ առաջարկությունները: Պատասխանների հիման վրա ամփոփ առաջարկությունը ելույթի տեսքով ներկայացվել է իմ կողմից կոնֆերանսի հաստատմանը: Հունիսի 18-ին՝ լիագումար նիստին, հաստատվել է ԵՎԿ-ի Բյուրոյի անդամների կազմը 2025-2027թթ. համար:

Լիագումար նիստի ավարտից հետո՝ հունիսի 18-ին, տեղի ունեցավ ԵՎԿ-ի նորընտիր Բյուրոյի հանդիպումը:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման վերջում հաստատվեց հաշվետվությունը: Օրակարգի առանձին հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվեցին օրակարգի համապատասխան կետերի քննարկման վերջում: Կոնֆերանսից հետո կպատրաստվի մանրամասն հաշվետվություն և կուղարկվի բոլոր մասնակիցներին՝ մեկնաբանությունների համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը կոնֆերանսին հնարավորություն ընձեռեց քննարկելու և ծանոթանալու վիճակագրական գրասենյակների աշխատանքի ռազմավարական ուղղություններին, վիճակագրության տարբեր ոլորտների մշակման, վարման և տարածման արդի փորձին, վերջին զարգացումներին, զեկույցներին, ուղեցույցներին և առաջարկություններին, քննարկելու իրականացված և պլանավորելու իրականացվելիք խորացված վերանայումները, ներկայացնելու Հայաստանի փորձը, ամրապնդելու վիճակագրական ներուժն ու մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

20.06.25թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	**ՀՀ վիճակագրական կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	**Վարչապետի որոշում թիվ 462-Ա 30.05.2025թ**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)	**Ստեփան Մնացականյան** ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*
4. Գործուղման վայրը	**Շվեյցարիայի Համադաշնություն՝ Ժնև**
5. Գործուղման ժամկետները	**16.06.2025-18.06.2025թթ**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	**2025թ. պետական բյուջեով ՎԿ-ին հատկացված միջոցների հաշվին**
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	*(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)*
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	*(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)*

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Ստեփան Մնացականյան**	**Ընդամենը (հազ. դրամ)**
Ճանապարհածախս	Ավիաձառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	323602	323.60
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$198.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	76365	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	152729	152.73
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$158.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	60634	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	181902	181.90
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**658233**	**658.23**

/ Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան

23.06.2025թ